Ոչ միայն 1820-ական թթ., այլև այն ժամանակ, երբ Թուրքմենչայի դաշնագրության զորությամբ Երևանի և Նախիջևանի խանությունները 1828 թ. միացվեցին Ռուսաստանի հետ, մեծ նշանակություն էր տրվում Շուշուց Գորիսով-Բռնակոթով, Սիսիան (Բիչանաղ) և ապա դեպի Նախիջևան տանող ճանապարհին, որը ճանաչված է իբրև Թիֆլիսից դեպի Թավրիզ տանող ամենակարճը: Այս ճանապարհը դյուրացնելով առևտուրը երկու պետությունների միջև, նաև «այն հարմարությունն էր ներկայացնում, որ Շուշում տեղավորված զորամասերը հնարավորություն կունենան խոտով իրենց ապահովել Զանգեզուրի մահալում, որտեղ ընդարձակ խոտհարքեր են և կլիման առողջ է[11]»: Այդ ուղին բազմամարդացնելը ռուսական քաղաքականության հերթական խնդիրներից մեկն էր դառնում:

Թե ինչ լիազորություններով և պարտականություններով էին օժտված մահալական մելիքները, հատկապես Զանգեզուրում, այդ հարցին պատասխանելու համար առանձին աղբյուրներ չունենք. դրա մասին մի հասկացողություն կարող է տալ այն կարգը, որը գոյություն ուներ Երևանի և Նախիջևանի խանությունների մեջ և բավական հանգամանորեն նկարագրված է Շոպենի նշանավոր աշխատության մեջ, որը նվիրված է այդ նոր նվաճված երկրների տնտեսական, հասարակական, քաղաքական կացությանը ռուսական տիրապետության հաստատման միջոցին[12]: Մահալական մելիքը պիտի՝

1. Առանձին գյուղերի միջև բաշխեր այն պարտավորությունները՝ դրամական և աշխատանքային, որի չափը որոշում էր խանը ամբողջ մահալի համար:

2. Հարկադրեր բնակիչներին կանոնավոր վճարել տուրքերը:

3. Պաշտպաներ մահալը ամեն արտաքին հարձակումից:

4. Քններ գյուղերի և առանձին բնակիչների միջև ծագող վեճերը և պաշտոնատար անձանց դեմ հարուցած մեղադրանքները:

5. Ի կատար ածեր դատական վճիռները:

6. Որոներ, ձերբակալեր և համապատասխան դատի հանձներ ավազակներին և հասարակական ապահովությունը վտանգող հանցագործներին և այլն[13]: Այս պարտականություններից մի քանիսը անցնում էին կալվածատիրական կամ բեկերի կառավարությանը շնորհված գյուղերում այդ գյուղերի կալվածատերերին կամ կառավարող բեկերին: Գյուղերում վարչական կազմակերպությունը ներկայացված էր քյոխվանէրով, քէթխուդանէրով կամ գյուղական մելիքներով, որոնց սովորաբար կարգում էր կամ մահալական մելիքը, կալվածատերը կամ տեղական մասնավոր մելիքը: Գյուղական տանուտէրների պաշտոնը հաճախ անցնում էր ժառանգաբար:

Խանական պաշտոնյաներից ոչ ոք չէր ստանում վարձատրություն, այլ ուներ առանձին եկամուտներ, որոնք գոյանում էին տուրքերի միջոցով, որ բազմազան անունների տակ վճարում էր գյուղացին: Մոգիլևսկու և Երմոլով 2-րդի զեկուցագրի մեջ մեկ-մեկ բերված է այդ տուրքերի ընդարձակ ցանկը: Նրանցից մեծագույն մասը ընկնում էր գլխավորապես նստակյաց գյուղերի

---

[11] «Обозрение российских владений за Кавказом», т. III, էջ 266.

[12] *Шопен Ив. Ив.*, Исторический памятник состояния Армянской области во время присоединения ее к России, стр. 986 и сл. Ср. «Обозр. росс. влад. за Кавказом», т. II, էջ 354 և հաջորդ:

[13] Հմմտ. *Иваненко В. Н.*, Гражданское управление Закавказьем, էջ 138.